

# ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱԹԷՆՔ

ԿԱՄ

## ԱՒԵՐԱԿՆԵՐԻՑ ՈԳԻ ԱՌԱԾ ՄԻ ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

Ջատկական տօները մօտենում էին և ես կարօտակէզ սրտով սպասում էի ըղձալի Աթէնքի տեսութիւնը, այս պանծալի քաղաքի և նրա շրջակայքի տեսութիւնը, որոնք իմ պատանեկական հասակի ամենասիրելի երազների կենտրոնն էին եղել: Այն, այն երջանիկ օրերից արդէն պատկառելի քսան տարիներ են անցել, երբ մեր բանաստեղծ սիրելի ուսուցիչ Աղալեանցը մեզ նկարագրում էր այն սքանչելի տխրանճերն ու նրանց զարմանահրաշ քաջագործութիւնները, բայց և այնպէս ես դեռ շատ բանէի լիչում: Թէև լեռու էս օտար դպրոցում նորից կրկնեցի նոյնը, սակայն այնտեղ ոչ այն հասակը և ոչ այն հմուտ պատմիչն<sup>1)</sup> ունեցալ, որ այնպէս գիտէր խօսել մանուկների սրտի հետ, որպէս Հոմերոսը երբեմն մանկական հասակում գտնած ժողովրդների հետ: Միւս ընկերներս ու ես թէև արդէն 10—13 տարեկան էինք, սակայն ամենայն պարզսրտութիւնով հաւատում էինք այդ ամենին և ոգևորում էինք նրանցով:

Եւ երբ ես մի կողմից մանկական և միւս կողմից երիտասարդական սիրելի իղձերով զեղուն սրտով անհամբերութիւնով սպասում էի այդ օրին, քանի նա մօտենում էր, այնքան խառնում էր եղանակը, այնքան ակնկոծում ու խռովում էր ծովը: Ուրեմն այս անգամ ևս ինչպէս իմ երազ-

<sup>1)</sup> Մի զեղեցիկ շուգադիպութիւն էր այն, որ հէնց նոյն օրերում իմ այդ սիրելի ուսուցիչն արդէն ալեխառն մօրուքով պաշտելի Հալբիլի տեսութիւնից լեռու էր, իբր Աթէնքի ականատես, այժմ ոգևորում էր իմ երիտասարդական սիրտը, երբ Ջմիրաճիալի վրայով հայրենիք էր վերադառնում:

Ներկից շատերը պիտի անհրեութանային, մտածում էի ես սրտնեղութիւնով ու տարակուսանքով: Բայց ասն արձակուրդ, ասն և մի սքանչելի օրս Որքանն զեղածիծաղ, որքանն հրատուրիչ էր այսօր այն ծովը, որ իբրև մի զիւրազգաց ու քնքուչ սիրտ՝ այնպէս կարեկից ու մասնակից է մալր բնութեան հրասքանչ կեանքի այս կամ այն ուրախ ու տխուր երևութներն, որոնք իրանն ըմբռնելի են:

Մինչդեռ ես ալպպիսի զգացմունքներով տողորած շողենաւի սանդուղքից բարձրանում էի, սպասում էի մանաւանդ լոյներից մի մեծ քանակութիւն ուղեկիցների, սակալն մեծ եղաւ, ի հարկէ, իմ զարմանքը, երբ ճակիկն երևելի խօնիալի ժամանակակից դաւակններից միայն մի երկու պարզ ընտանիքներ տեսալ, որոնք իրանց ազգականներին էին ալցելութեան գնում Սս լսելէի, որ այս առթիւ շատ մարդ է գնում, բայց միայն եւրոպացի ճանապարհորդներ տեսալ: Անն նաև այս անգամ ես համոզեցի, որ այս կողմերի լոյներն ակելի եւրոպական կեանքի արտաքին երևութներն ըմբռնելով՝ դեռ շատ հեռու են նրա իրականութիւնից:

Դեռ Զմիւռնիալի ծոցից չեղած՝ մութը կոխեց, այնպէս որ ես ալ ես չը տեսալ այս անգամ Քիոս և Պարա կղզիները. միայն առաւօտեան երեաց Էգէլեան ծովի մեծ կղզիներից մէկը՝ Էօլթօան (Սւրէա) և սրա հանդէպ՝ փոքրիկ Անդրօսը, Աւելի հեռուն ալ կողմից արդէն երևում էր մշուշի մէջ հռչակաւոր Ատտիկեան թերակղզին, իսկ ձախ կողմից նրա փոքրիկ դրացիներից Յիա կղզին: Մենք անցնելով Լիւրն հրուանդանի առջևից՝ արդէն Էգէնալի ծոցն էինք մտնում, որի հարաւում Էգենա համաճուն կղզին, իսկ հիւսիսում հռչակաւոր Սալամիսն էր, որ բարձրանում էր մեր առաջ, Վերջինս այնքան մօտ է (4 հազարամետր) Աթէնքի Պիրէա ճաւահանգստին, որ հեռուից բոլորովին անբաժան է երևում նրանից: Սալամիսն, ինչպէս լատնի է, ի հնումն առանձին պետութիւն էր, որի Տելամոն և Ալաքս թագաւորներն ամենաերեկելներն են: Նա Սուլոնի և Սւրիպիդէսի հալոնիքն էր և պատմութեան մէջ անմտանալի է նրա անունը, որովհետև այստեղ էր որ մեծ հալոննասէր Թէմիստոկլէսը, պատմական ամենավեճ անձերից մէկը, 480 թ. Քր. առ. կործանեց զոռ Քսէրքսէսի ահաւոր նաւատորմիցը, այն Քսէրքսէսի, որ Հելլէսպոնտի վերալ կամուրջ անցկացրեց, ապա Աթէնք հասնելով՝ ալրեց և ապա լաղթելով մի ճաւակով փախուստ տւեց 300,000 զինուոր երեսի վրալ ձգելով: Այժմ Սալամիսի բաւականին բարձր լեռների վրալ երևում են մի քանի փոքրիկ քաղաքներ ու գիւղեր:

Բայց դեռ այս կղզին չը հասած՝ շողենաւը զէպի ալ է շեղում ու մտնում է Պիրէալի, Աթէնքի հին պահապան հրեշտակի և մատակարարի, փոքրիկ ու խոր ծոցը, որը փարոսների մօտ այնքան նեղ է, որ հալու թէ երկու մեծ շողենաւեր միաժամանակ անցնելու թող ստար: Եւ ասն հետզհետէ պարզում է մեր առաջ ճակ Աթէնքը, սակալն նա ծովափից հեռու

և պատմական եօթը բլուրների ստորոտներում հիմա զետեղուած լինելով մեզ ցոյց է տալիս համարեա միայն իւր փառքերի փառք Ակրոպոլիսը, աչն միջնաբերդը, որ աւելի աստուածների բնակավայր՝ քան պատերազմական հանդիսավայր էր եղել: Այս նաւահանգիստը քաղաքից թէև 8 հազարամետր հեռու էր գտնուում, սակայն էրկու ահաւոր պարիսպներով միացած էր նրա հետ և որոնց հետքերը տակաւին լաւ տեսնուում են: Այս պարիսպներից մէկը շինել էր Թէմիստոկլէսը, իսկ միւսը՝ Պեիկլէսը: Երբ լեզանդրը գրաւեց Աթէնքը, խորտակեց նրա այս պատարները, լետոյ նրանք մասամբ վերաշինեցին: Կանոնի ձեւքով և նորից հիմնադրուող եղան Սեյլալի հրամանով: Ալժմ Պիրէլան մի պատկառելի արւարձան է մօտ 10,000 բնակիչներով: Նրա առաջ շարունակ կանգնած են բազմաթիւ շոգենաւեր, առագաստաւոր նաւեր, հեղինական և լաճախ օտար մարտանաւեր: Նրա մէջ գործում են բաւականին քանակութեամբ գործարաններ, նա մի բանով ու կենսալի նաւահանդիստ է, որ մալրաքաղաքից իւրաքանչիւր 20 րոպէն մի անգամ երկաթուղային կառքերի երկար շարքեր է ընդունում ու նոյնքան վերադարձնում: Աղեղնաձև ու լաչն ծովափն իւր երկկողմանի սալալատակներովն հէնց առաջին վայրկենից գեղեցիկ տպաւորութիւն է գործում նորեկի վրայ: Մենք իջնում ենք մաքսատուն, ուր ամենևին անցաթղթի անուճ չը տալով, հարեանցի խուզարկում են մեր իրեղէններն և մեզ իսկոյն աղատութիւն տալիս: Մի քանի քալլ փոխելով հասանք ասպուղին (տրամաւ ձիաքարչ երկաթուղի) և երբ կառք նստեցինք, մի խղճով բեռնակիր ձեռք մեկնելով մի քանի լեպտա ուղեց: Մենք որ նրան ամենևին չը ծառայեցրինք, տարօրինակ համարեցինք նրա պահանջը: Իմ աւատրիացի ուղեկիցը խոթուողէմ նաւածքով մերժեց նրան և ասաց՝ Ահն այս արեւըում պատահում են այսպիսի բաներ, Նս էլ սկսեցի մտածել, որ ահն սկսուում են աչն կողոպտումները, որոնց մասին աչնքան լսելէի, սակայն դեռ Աթէնքի երկաթուղային կաւարանում ես շրջապատողներին տեսնելով՝ դարձաւ իմ ուղեկիցն արտալպետելով աչն միտքը, թէ այս լոյներն ամենևին իրանց Պոլսի և Խճմիրի ազգակիցներին չեն նմանում, որ աթէնացոց երեսից կարծես մի տեսակ ազնուութիւն է կաթում: ձիւտ է, լարեց նա, ես էլ առաջին անգամ նոյն տպաւորութիւնն ստացաւ և ապա երկար տարիներ աչք երկու երկրներում շարունակ առետրական գործեր ունենալով՝ աւելի ու աւելի համոզեցի: Այս լսելով մի աննկարագրելի ուրախութիւն զգաց իմ սիրտը, որ ցանկանում, աչտ, փափաքում էր այս պատկառելի վայրերում մի աշխիւ ժողովուրդ տեսնել: Արդեօք ուրախակցութեան և վշտակցութեան զգացմունքներն էին, որ աչք վայրկենին միմեանց հետ մրցելով իշխել էին ուզում իմ սրտի վրայ, թէ մի ետական ցանկութիւն՝ իմ սպասելի գեղեցիկ տպաւորութիւնների ամբողջացման համար: Թէ այս և թէ աչն մարդկային էր... Անցնելով գործարանների, ձեթաստանների, ալգեստանների և արտերի միջից՝ մենք շուտով քաղաք հասանք, որի կաւարանի

առաջ սպասում էին ասպուղու կառքերից զատ նաև բազմաթիւ հանրա-  
կառքեր ու կառքեր Դէպի հիւրանոցը տանող փողոցը թէև միւսների պէս  
ընդարձակ, սակայն նրանց չափ էլ փոշոտ էր: Այս փողոցի մալրաքաղաքի  
ամենազլխաւոր պակասութիւնը փոշին է, որ լիրաւ անտանելի է, թէև երկու-  
կողմերից փողոցներն ունեն սալալատակներ: Քաղաքի հարստութեան մի  
նշանաւոր մասը ծախսում է հասարակական և մասնաւոր հողակապ շի-  
նութիւնների վրայ և ալալխով ալ ևս միջոց չէ մնում փողոցները քարե-  
լու, որ միշտ ապագայի խնդիր է մնում և թերևս շատ երկար, շնորհիւ  
Յունաստանի անտեսական լարածուն ծանր վիճակին:

Բայց սակայն նախ քան նոր Աթէնքի և նրա նորագուն կեանքի  
մասին խօսելու՝ հարկ եմ զգում նախ հնից սկսել, որի վիշտակարանները  
տեսնելու իմ զլխաւոր նպատակն էր, ուստի և ևս կարծում եմ, որ իմ  
նկարագրութիւնների ալ բաժինը մասնաւորապէս գրաւելու է իմ ընթեր-  
ցողների հետաքրքրութիւնը: Այս քաղաքը ժողովրդների քաղաքակրթա-  
կան-պատմական կեանքում բոլորովին մի բացառիկ դիրք է լո՛ւ՛ւ  
անցնելով առանձին նշանակութիւն է ունեցել արեւելեան ժողովրդներից  
նաև մասնաւորապէս մեր Հայկազեանի համար, թէև շնորհիւ քրիստոնէա-  
կան բուռն հոսանքին՝ ալդ սերտ լարաբերութիւններից շատ կցկուր վի-  
շատակութիւններ ևն մնացել: Մեր ազգն ի հնուց վրաւի շատ առնչու-  
թիւններ պէտք է ունեցած լինէր ատտիկացիներին հետ. թէ մինը և թէ  
միւրը ուսումնասէր, թէ մէկը և թէ միւրը նւիրած աւելի քաղաքակրթա-  
կան խաղաղ գործին՝ քան ասպատակութեան կամ աշխարհակալութեան,  
Նւ ահա մենք քանի աւելի ենք հետազոտութեան նւթեր ձեռք բերում  
մեր նախնիքների կեանքից, ալնքան ևս առաւել սերտ կապեր ենք տես-  
նում այս երկու երկրների կրօնական և փիլիսոփայական հալեցածքների,  
գրականութեան, գեղարւեստի, արհեստի, սովորութիւնների, աւանդու-  
թիւնների և ալ բազմապիսի երևութիւնների մէջ, Բայց ինչ մինչդեռ հին-  
գերորդ դարում փալտում է հալ գրականութիւնը, ոսկէ դար պանծալի աս-  
տիճանին հասնելով՝ ալնտեղ Յունաստանը իւր աստածների հետ քրիս-  
տոնէական դարում կորցնում է և իւր ալն շքնաղ դիրքը աւար դառնալով  
չորրորդ դարու վերջերում Ալարիսի վէսագոթերին և 520 թ. Յուստինիա-  
նոսի հրամանով զրկում նաև իւր դպրոցներից: Թէև մենք ոչ հաւազէտ և  
ոչ պատմաբան ենք, սակայն թող ներւի նաև մեզ իրրև մի հարցասէրի  
կարծել, որ մի ալնպիսի ընտիր կլասիկական լեզուն, մի ալնպիսի կիրթ  
ճաշակ և միտք անհնարին էր ունենալ մեր հինգերորդ դարու մատենադր-  
ներին, եթէ նրանց նախահալերը դարեր, շատ դարեր առաջ նախապատ-  
րաստած չը լինէին ալդ արդաւանդ հողը: Ներկալ դարուս ալալխի նպատ-  
տաւոր հանգամանքներում մենք ակնմատես ևնք ալն իրողութեանը, թէ  
ինչպէս լամբ քալելով է մշակում մի լեզու ինչու չը կարծել, որ մենք նոյն  
խկ հելենական ոսկէ դարում, ալննքն չորրորդ դարում Քր. առաջ ունե-

ցած լինելիճք ուսանողներ Աթէնքում և նրա ճառագայթներով լուսաւոր-  
ւող այլ լուսնական քաղաքներում: Մեր հալագէտներինց մի քանիսն արի  
տեսակէտը գրաբառի հնուիեան մասին անկասկածելի է:

Ուրեմն սկսենք հին Աթէնքից և չը բաւականանք միայն մնացած  
լիչատակարանների առթով այս կամ այն տեղեկութիւնները տալով, այլ  
վեր առնենք այս հիանալի քաղաքի պատմական կիանքի շրջաններից  
ամենանշանաւոր երևութիւնները, որոնք պիտի ծառայեն իբրև լուսարանու-  
թիւն մեր ասածներին: Այլ քանի որ մենք ձեռք առանք այս նիւթը, մեր  
հարցասէր ընթերցողին որքան և իցէ բաւականութիւն պատճառելու հա-  
մար, չը խնայեցինք մի քանի աւելի ժամեր՝ այս նիւթերը Ֆրանսիական՝  
աշխարհիս մեծագոն նոր հանրագիտարանից քաղելու <sup>1)</sup>: Այս ահա ինչ  
գեղեցիկ խօսքերով է սկսում այս լողածի առաջին մասի կազմող Ժ.-Ա. Հիլլը:

«Չկալ հին պատմութեան մէջ մի աւելի վեհ, մի աւելի լուսաւոր  
անուն՝ քան Աթէնքը: Այս անունը մի ամենափալուտն քաղաքակրթու-  
թեան լիչատակն է արթնացնում, որ երբ և իցէ տեղի է ունեցել, Նա  
ամբողջում է այն, ինչ որ մարդկութիւնն արտադրել է ամենակատարելալը  
գրականութեան, գեղարեստի, փիլիսոփայութեան և քաղաքականութեան  
մէջ. Նա ոչ միայն իդէալական իմաստութեան արտապատմութիւնն է, որ  
ընդունակ է մարդկային բարւոքման տեսութեան (թէօրիա) և մտազննու-  
թեան շրջանում. նա մեզ ներկայացնում է իրականութիւն ստացած ամու-  
նագեղեցիկ երազների տեսարանը, մարդկային տեղանքների և ձիրքերի  
ներդաշնակ հաւասարակշռութիւնը, մարտական քաջութիւն և հպրնա-  
սիրական անձնուրացութիւն՝ ներած բարձրագոյն իմացականութեան,  
ընկերական բոլոր ոլթերի ներդաշնակութիւն՝ բանականութեան և մտա-  
տիպարի (իդէալի) տիրապետութեան համար: Լուսաւորութեան այս աղ-  
բիւրից, զրւած արեւելքի սահմանազլտում, որից նա իւր ցուքերն էր  
ստացել, տարածւեց բարբարոս արևմուտքի մէջ հին քաղաքակրթութեան  
բոլոր պաժառութիւնը: Ժամանակակից ոգին նրան է պարտական իւր  
ամենաթանկագին վաստակները, չկալ մարդկային հանճարի մի հատիկ  
լատմութիւն, որ Աթէնքում չունեցած լինէր իւր ներածութիւնը (initiation)  
և ամենալաճախ՝ իւր նախատիպարը:

Ա. Աթէնք իւր ծագումից մինչև Պիզիստրատի գնեցը,  
Աթէնք, Աֆրիկայի մալրաքաղաքը գտնուում է ապառաժուտ բլուրներով

<sup>1)</sup> Սորա միայն Ա տառով սկսող բառերը Հակագեան երկուհատոր  
բառարաններից կրկնակի ստւար գրքեր են կազմում. գեոթ տառն է,  
ուճի 400 աշխատակիցներ, և երբ լրանալ, ինչպէս երևում է, բարձր  
պէտք է լինի ոչ միայն գերմ. Բրոքհաուս հանրագիտարանից, այլ և  
Մալերինից, որ երբ վերջերս աւարտեց՝ աշխարհիս ամենհարուստ գիտա-  
կան շտեմարանի անունը վաստակեց:

ընդհատած դաշտավայրի մէջ, Ալս բարձր մասերում այս վտիտ և քար-քարուտ հողը, իսկ ստորոտներում ճահիճներով զրաւած՝ ամենեին լարմար չէր երևում մի բազմամարդ քաղաք սնուցանելու և նրա բարգաւաճութեանը նպաստելու թէև առասպելաբանութիւնը հողագործութեան սկզբնաւարտութիւնն Աթէնքին է վերագրում, սակայն հացահատիկներն ընդհանրապէս լաւ չէին հասնում այտեղ, միայն գարին էր որ հասնում էր մի քանի պտուղների հետ: Բայց հողի այս պակասութիւնը վտիտարիւնում էր կլլմալի առաւելութիւններով՝ օղի բացառիկ պարզութիւնով: Ամբողջ Յունաստանի մէջ, ցօղերի առատութիւնը, որ շարունակուած էր նոյն իսկ ամբարալին ամենատաք ժամանակներում, ծովի սիւքերի զովարարութիւնը, մինչև լաւ լեռները հիւսիսում և արևելքում պատասպարում էին խիստ և վատառողջ հողմերից, որքան որ նպաստաւոր էին բոսնի մշակման, նոյնքան էլ մարդկանց Ֆիզիքական և բարոյական առողջութեան: Հողը, որ միմիայն շնորհիւ աշխատութեան էր արտադրում, զէպի գործունէութիւն էր դրդուած. ծովը օգնում էր քաղաքի կեանքին և որովհետև անհնարին էր երկրագործական արտադրութիւններն արտահանել, որոնք հազիւ բաւականութիւն էին տալիս ներքին պէտքերին, արտահանութեան առևտուրը կարող էր միայն մշակած նիւթերին վերաբերել: Ալստեղից արևաստների զարդացումը, որոնք զարդարում էին կեանքը, ճաշակաւոր և ճարպիկ կաւագործութիւն: Պէնտէլիքի ընտիր մարմարիւնները մատակարարում էին ճարտարապետութեան նիւթը, իսկ Լորիումի արծաթի հանքերը՝ տուրեսուի դիւրացուցիչ դրամները:

Այս անունը, որ քաղաքը պատմութեան մէջ կրում է, միայն իրան լատուկ չէր, և զանազանելու համար ասում էին Ատտիկէլի Աթէնք, Յիրաւի ի հնումն ինքը համանուն քաղաքներ կալին: Բոլոր այս քաղաքները առանց բացառութեան իրանց անուններն ստացել են Աթէնալից<sup>1)</sup>: Նրբ Աթէնքում պելազդներն էին բնակուած, նա սկզբները Վէկրոպիա էր կոչում, Վէկրոպի անունից, թագաւորներից առաջինի, որոնց մասին առասպելական պատմութիւնը լիշատակներ է պահպանել: Նրբ դորիացիներն արչաւեցին զէպի Պելոպոնէս, լծիական ցեղին վերաբերեալ ժողովուրդներն անտեղից դուրս մղելով՝ ապաստանեցած էջպիան լեռների մէջ, որտեղից նրանք չը լապաղեցին Պէզիաս դաշտավայրն իջնելու, որ զէպի Աթէնք էր տանում: Առասպելաբանութիւնը պահպանել է նաև մի ալլ գաղթականութեան լիշատակ, որ միևնույն ժամանակ աթենացիներին ու էլօլգէսի բնակիչներից միմեանց զէմ հանեց. այս կոիւնները վերջացան նրանով, որ երկու կողմերն հաշտելով մի դաշնակցութիւն կազմեցին ու

<sup>1)</sup> Տարբերութեան համար այս քաղաքի անունի վերջն աւելացնում էին լոգնականի մասնիկն, ինչպէս հպերս էլ՝ ք տառը:

ալսպիսով միացրին զանազան փոքրիկ ցեղերը, նրանք համախմբուած են Աթէնասի երկրագոյտութեան միութեան մէջ և հիմնուած Աթէնք քաղաքը: Այս միութեան պատիւը վերաբերուած են Թեզէոսին, որ ալսպիսով պէտք է համարել աթէնական տէրութեան իսկական հիմնադիրը: Նրա թագաւորութեան ժամանակ աստուածներէ շրջանը, որոնց երկրագոյտութիւնը ներկայացնում է քաղաքական և ընկերական կեանքի զանազան երևոյթները և որն սկսուած է պէլագոզեան Արամազդով, ստացաւ Ապոլոնը, բոլոր լոնիացիներէ ազգալին աստուածը: Նա ինքը Թէզէոսը, թշնամանեց շերակլեան կրօնը, որի արկածներին նա մասնակից էր եղել, սահմանեց Աֆրոդիտայի և Պէլոպոլի (? Սմբ.) պաշտամունքը: Աթէնքում միայն մի կրակատուն մնաց ալսուհետ, Ակրոպոլիսի հիւսիսային կողմը՝ ուր գծալիս էին ասիացի լոնիական գաղթականները սուրբ կրակ տանելու: Այս երջանիկ հետեանքներէ ի վիշտակ իւրաքանչիւր տարի կատարուած էին միութեան տօնը՝ մի քանի օր Պանաթէնեան տօներէից առաջ, որոնց հիմնադրութիւնը՝ նոյնպէս Թէզէոսին են վերագրուած: Նալելով ալս կիսապատմական ու առասպելախառն տեղեկութիւններին, Ակրոպոլիս մինչև պատմական ժամանակները մնացել էր կրօնական կենտրոն. ալստեղ էր բարձրանում էրէխտէոնի ալս սրբարանը, որի մասին խօսուած է Նլիազը, ալս սրբարանը, որ նւիրուած էր Աթէնաս Պալլասին, ալսինքն՝ քաղաքի պաշտպանին: Նա ալստեղ մեծարուած էր Պոսիդոնի հետ միասին, որ ծովալին լոնիացիներէ նախամեծար աստուածն էր: Թեզէոսի իդէալական հայրը: Ապա ալս բլրի վրայ նաև ալս սրբարաններ շինեցին, իսկ նրա շուրջը հետեզետէ զանազան գաղթականութիւններով շէնցաւ, քաղաքը մեծացաւ, զանազան մասերի բաժանուց, որոնց մէջ ամենաներկելին էր միջնաբերդի արևմտ. կողմը՝ մինչև Նլիստու գետակը: Այս քաղաքաբաժինը անուանուց Քիդաթէնէոն, ալսինքն՝ վեհ և հարազատ Աթէնք: Այս քաղաքաբաժնումն էր Արամազդի տաճարը, Ոլիմպէոն, Աթէնքի ամենանշանաւոր նւիրական հնութիւնը, որի շինութիւնը շատ անգամ թերի մնացած՝ միայն Ադրիանի ժամանակ լրացաւ: Ակրոպոլիսից և Քիդաթէնէոնից դէպի արևելք՝ Յաւէրժահարսերի, Պնիքս և Մուսաների բլուրներէ մէջ զետեղուած էր մի ալս նշանաւոր քաղաքամաս Մելիտ, որի մէջ ամենանշանաւորն էր Թէզէոնի տաճարը, որ անձեռնմխելի սպաստանարան էր փախստական գերիներէ, անբաղդներէ և տառապեալների համար: Մելիտում բարձրանում է նաև Արէսի Արէոպագ լեռը, ուր Աթէնասը վերջ տալով փոխլրէփի ոռոգութեանը, հիմնեց գթառատութիւնով չափաւորած դատաւարութիւնը: Այս բացօդեալ դատարանն ապառափի մէջ շինուած ատենանով և սամետակց աստիճաններով տակաւին ցոյց է տալիս իւր հետքերը: Արէոպագիսի հանդէպ՝ արևելքում գտնուած է վերոյիշեալ Պնեքս բլուրը, ուր թագաւորութեան ժամանակներից ժողովուրդը հրաւիրուած էր ժողովի՝ հասարակական խնդիրների մասին խորհրդակցելու համար:

Այս և միւս քաղաքաբաժինները, միասին թուով տասը, ունէին երեք տեսակ բնակիչներ. Եւրասրիտներ կամ աղնւակահաններ, Գէոմորներ կամ մշակներ և Գէմիուրներ կամ արհեստաւորներ:

բ. Աթէնք Պիզիստրատի զնեբից մինչև մեղական պատերազմն երբ: Պիզիստրատ, տիրանալով Աթէնքին՝ փոխարէն իւր բռնապետութեան աշխատեց իւր Հիպպիաս և Հիպպարք որդիներէ հետ մեծ մղում տալ հասարակական շինութիւններին՝ քաղաքի գեղեցկութեան և ընդարձակման համար: Հիպպարքի գործերից ալտեղ վիշնք նւիրական ճանապարհի վրայ, որ դէպի Էլլոզեսէ գնում, Հիպպարքի կառուցած հասարակական գիմնապիտներ, ճևարանք, որ Կիմոնը զարգարեց և Պլատոնը լուսաւորեց:

Հիպպարքի սպանութիւնն և Հիպպիտի արտաքսումը ամենին շքնահասեցին Աթէնքի գեղարւեստական կերպարանափոխութիւնը: 500 թւականին Ակրոպոլիսի հարաւ արևելեան զառւիպարում շինւեց առաջին քարէ թէատրոնը, Գինիստի թէատրոնն, այսպէս անւանւած Լէնէնի զրացիութեան պատճառով որ հաստատում էր արն առանձին խնամակալութիւնը որով ասուած մեծարում էր բնական խաղերը: Եւրիպիլից և Մեգարալեց Աթէնք եկած ալ խաղերն իրանց ծագումով Գիտիստանների (Բաքտսեան տօնախմբութիւնների) տարրերից մէկն էին կազմում, ինչպէս հագնեղութիւնները (ռասողիա) Պանաթէնեան երգերի մի տարրը: Թէատրոնը, որ լետող գեղեցկացաւ, իւր ծագումով մի շատ հասարակ շինութիւն էր, հանդիսականների աստիճանները կտրւած էին սպառաժի մէջ. բնմն ու երաժշտարանն էին, որոնք իսկապէս որոշ շէնք ունէին:

Մեղական (պարսկական և. դար Քր. առաջ) պատերազմները ծանրագոյն ճգնաժամն էին, որոնց շնորհով աթէնական քաղաքակրթութիւնը կարող էր կործանւել, որոնցից նա հակառակ մարդկային կանխատեսութեան՝ դուրս եկաւ մեծացած, զօրացած, աշխարհը զարմացնելով ամենասքանչելի պտուղների բարդաւաճումով: Մարաթոնում էր արն, Աթէնքի հիւսիսում՝ իւր քաղաքական կեանքի անմիջական շրջանում, որ աթենացի Միլթիադէսը կոտորեց Գարիսի զինուորներին. Սալամինում էր, Ակրոպոլիսի աչքի առաջ, նոյն իսկ նաւահանգստում, որ եռ էր գալիս Աթէնքի առևտուրը, ուր աթէնացի թէմիստոկլէսը Քսէրքսէսի նաւատորմիդին մի արնպիսի հարւած տւեց, որից նա ալ ևս չուղղւեց: Թէրմոպիլեան կիրճի անցնելուց լետող Աթէնքին էր, որին Քսէրքսէսն ամենասատախիկ հարւած տւեց, նա արնաղ զգում էր Յունաստանի հողին, տոկոնութեան բարոյական կենտրոնը: Մինչդեռ թէմիստոկլէսը ծովի վրայ վճռական ճակատամարտը տալու համար մարդաբնակութեան մեծամասնութիւնը Արէզէն ու Սալամին փոխադրեց, մի քանի լամառներ, պատդամախօսի ասածին բառացի մեկնութիւն տալով՝ փակւեցին Ակրոպոլիսի պատերի մէջ, որ արևելեան և հիւսիս-արևելեան կողմերից պաշտպանւած էր

միայն պարտէզներով և ձիթատաններով: Անկասկածեցի է, որ պաշարումը Պիղիստրատների զարդարած քաղաքը աւերակների բեկորներ դարձրեց: Բայց անկախութիւնը փրկած էր և ազգային զգայունքը վերին աստիճանի գրգռած բողոքովին անսպասելի լաղթութիւններով՝ պատրաստականութիւն էր ընծալում ամեն տեսակ զոհարելութեան: Քաղաքն և իւր չէնքերը բարձրացան մոխրի միջից աչպէս, ինչպէս Աթէնացիների հուշակը վտանգներից՝ գեղեցկացած և մեծացած: Պատերազմից վտու ըստ Քէնոֆոնի՝ քաղաքն ունէր 10,000 տուն և ամենահաւանական հաշիւները հասցնում են ազատ և գերի բնակիչների թիւը մինչև 120,000, չը հաշւած պիւրէացիներն ու արւարձանների բնակիչները: Եթէ հաւատ ընծալենք թուրքիտէսին՝ Աթէնքի շրջափակը համարեա 43 ստադ, աչպինքն՝ համարեա 8 հազարամետր էր եղել:

Գ. Աթէնքը Մեդական պատերազմներից մինչև Աղէքսանդրի Հասկանալի է, որ Աթէնքի հրկիզութեան չափող օրը և աչն հոգսերը, որոնք նրա ապահովութիւնը Թէմիստոկլէսին ներշնչում էին, քաղաքը ամենեւին չը մտածած լինէր շքեղազարդ ու բազմատես շինութիւններ կառուցանելու մասին և շարունակելու Պիղիստրատիդների աւանդութիւնները: Ճարտարապետական բնատրութիւն ունեցող միայն Արտէմիս Արիստորուլէլի տաճարն էր՝ Մեկտ քաղաքաբաժնում, որ նրան են վերագրում: Բայց աչն, ինչ որ նա չը կարողացաւ անել, ձեռնարկեց կիմոնը, որ գեղեցկացման գործում Պիղիստրատների շարունակութիւնն է կազմում, իսկ Պերիկլէսի՝ նախորդը: Միւս կողմից աչ մեծ քաղաքացու գործունէութիւնը միանում է Աթէնքի գրադիտական ու գեղարեստական ամենագեղեցիկ շրջանի հետ: Ողբերգութիւնը Լսխիլի և Սոֆոկլէսի շնորհիւ, կատակերգութիւնը Կրատինոսի միջոցով, որին գերազանցեց Արիստոֆանը զարգանում էին նոյն ժամանակները՝ կաւագործութեան, պատկերահանութեան ու քանդակագործութեան հետ: Ազաթարիտուը նկարչութիւնը բեմական խաղերին ծառայեցրեց. Պոլիգնոտը, կիմոնի անձնական բարեկամը, իրան նւիրեց տաճարներն ու հասարակական շինութիւնները պատմական և առասպելական նկարներով զարդարելու գործին: Աթէնական քանդակագործութիւնը, ազատելով խիստ ձեւերից և նւիրական դիրքերից՝ մրցում էր իւր արտաբարութիւնով և բազմապիսութիւնով Սիկիոնի, Արգոսի և Էգինալի հուշակատր չկողաների հետ... Աւելացնենք աչ զանազան գործերի վերաջ ձեւարանի գեղեցկացումը արտաքին Կէրամք թաղում և բարեկեցիկ քաղաքացիների քաղաքաբաժնինը, մի մրցութիւն միևնույն ժամանակ թէ հարեւասիրական և թէ գեղարեստական, աչնպէս որ քաղաքը, հրաշքով աւերումից ազատելով՝ արծանի եղաւ որքան իւր տներով, նոյնքան էլ իւր չէնքերով իւր քաղաքական, պատերազմական և քաղաքակրթիչ դերին:

Սրեւում էր, որ կիմոնը չափազանց նւիրած էր Աթէնքի վերաշինութեան՝ ի վիշտակ իւր հօր և լոգուտ իւր ընտանիքի: Քաղաքադէտ, վարիչ

և զօրավար Պէրիկլէսը ի նկատի ունէր միայն Աթէնքի բարձրագոյն շահերը՝ Նրա միջոցով է որ քաղաքի բարոյական մեծութիւնն ու նիւթական պարծառութիւնը հասան լիակատար բարգաւաճման: Ամեն ինչ միասին պատահեց, արեւտադէտները հանճարը, պետական անձերի մէջ լուս ու շուք, հասարակական գանձի հարստութեան անսպասելի աղբիւրներ, խաղաղութիւն ներսը, զինուորական փառք դուրսը (Beulé, l'Acropole): Պէրիկլէսը վերաշինեց Պարթէնոնը, զօրեական ոճով կառուցած այս տաճարը, որին ձեռնարկեց Պիդիստրատ և պարսիկները ձեռքով աւարուելուց առաջ քաղաքաց: Նա Պարթէնոնին մրացրեց Պրոպիլէսը որի սպիտակ մարմարներից շինած սրճաղարղ սրահը (portique) ազամանդի նման պսակում էր միջնաբերդը. ապա նա վերաշինից Էրէկթոնը, Աթէնաս Պալլասի հին սրբարանը, Թէ ինչ աստիճանի մեծածախս էին այս շէնքերը, կարելի է դատել միայն նախագաւթիւնը գիտեմալով, որ 10 միլ. ֆրանք արժեց. Աթէնաս Պալլասի արձանի ոսկէ մասը միայն 3 միլիոն նստեց: Ամենից առաջ լրացաւ Պարթէնոնը, նախագաւթի՞քը 136-ին սկսելով վերջացաւ հինգ տարի փետու: Դէլոսի տաճարի դաշնակիցների ընդհանրական գանձարանն էր, որ օգնութեան հասաւ: Պերիկլէսը համարում էր այս մեծագործութիւններն իբրև հանրապարական սկզբունքների ամենաբարձրագոյն և ամենախմաստուն գործադրութիւն: Նրանց միջոցով նա տարածում էր առատութիւն ամեն բանի և այս առատութիւնը պտուղ էր խելացի աշխատութեան, որ մարդարանական բոլոր գործոն անդամները շարժման մէջ էր գնում. այդ առատութիւնը բղիթում էր դաշնակիցների նիւթական կարողութիւնից, որի փոխարէն Աթէնքը երաշխաւորում էր այդ պետութիւնների ապահովութիւնը և սրանով՝ բարգաւաճութիւնը: Կիմոն ունէր Պոլիգոտին, Պէրեկլէս՝ Ֆիդիստին և նրա հետ հռչակաւոր քանդակագործների, պատկերահանների և ճարտարապետների մի ամբողջ լէգէոն: Ակրոպոլիսից դուրս Պէրիկլէսը կառուց, թերես իւր ծախքով Օդէսնը կամ ծածուկ թէատրոնը՝ երաժշտական ներկալացումների և քնարերգական երկերի արտասանութեան համար: Ոչ հեռու ակտեղից գտնուում էր Տրէպիէդ (Նոտոանի) քաղաքաբաժինը, այսպէս անւանւած ալն վիշտակարանների պատճառով, որոնց շնորհով հանդիսածունքը լաւբժացնում էին իրանց բնական լաղթութիւնների վիշտակը: Պէրիկլեսան օրերից Պանաթէնեան տօնախմբութիւնները տևում էին ամբողջ վեց օր, երբ տեղի էին ունենում խաղերի բոլոր տեսակները՝ ներկալացումներ և կրթութիւններ, ուր Աթէնացիների արեւտագիտական ճաշակը, ձեակերտական կոթողը, գրագիտական ձեռքերը առիթ էին գտնում երևան գալու: Այն հանդատան ժամանակամիջոցներին, որ Պէլոպոնէսեան պատերազմները թող էին տալիս, դեռ այս կողմից էր որ քաղաքը շարունակում էր զարդարելու Արիւրդոսն աւարտեց Դիոնիսոսի մեծ թէատրոնը, նրան զարդարեց ողբերգակ բանաստեղծների արձաններով և նրանց երկերը հասարակական հեղինակութեան երաշխա-

ւորովեան տակ գրեց: Ագրէլի արւարձանը, որ գտնուում էր Իլիսուսի միւս կողմը, Հելիկոնի ստորոտում մի ընդացարան ստացաւ մարմնամարզական խաղերի համար. Լեկէոնի և Կիւնոզարդի մարմնամարզարանները վերաշինւեցին կամ ընդարձակւեցին: Հասարակ մասնաւոր անձեր իրանց հաշուով հասարակական շինութիւններ էին կառուցանում: Պատոնը ճեմարանում շինել տեց մուսաների տաճարը Լիզելկրատը՝ մի փոքրիկ մարմարոնեալ սրբարան Ալրոպոլիսի հիւրիս արևելքում Տրէպլիէզի ծալքում, սրբարան որ չարտնի է Դէմոսթէնէսի Լապտեր անւան տակ և այլն:

դ. Աթէնքը Աղէքսանդրից մինչև Պաւղանիոսի ճանապարհորդութիւնը (160 թ. Քր. Վտով): Եթէ Պլիլիստրատիդների գահակալութիւնից մինչև Քէրոնեան ճակատամարտն անցած երկու դարերը Աթէնքի համար մի փառահեղ ծաւալման (expension) շրջան եղաւ՝ շուրհիւ իւր սեփական աղբիւրները, մակեդոնական տիրապետութեան ժամանակները, որին հետեւց հռովմէականը, ներկալացնում են հետաքրքրաշարժ տեսարան մի քաղաքի, ակնածութիւն ներշնչող իւր տէրերին, և լիացած նրանց բարեգործութիւններով և պահած նիւթական շքեղութեան մէջ, ինչպէս մի թանկագին առարկայ, որի տէրերը ջանացին նորա արժէքը խնամով պահել: Աղէքսանդրի համբաւը, որ բաժանւեց նրա կայսերութեան ժառանգորդների մէջ, միայն պատերազմական փառքից չառաջացաւ, նրան մասնակից եղաւ մի մեծ բաժին այն մտաւոր ու բարոյական պերճութեան, որի համար հելլենականութիւնը պարտական էր մասնաւորապէս Աթէնքին: Նոյնպէս այս քաղաքը հետզհետէ սկսեց համարել զեղարւեստի և գրականութեան մալրաքաղաք, ուսուցիչ հին աշխարհի մտաւոր կեանքի:

Առաջի բերան Հռովմէացիները քիչ զժառութիւն կրեցին իրանց բարբարոսութեան ու անլազութեան բնազդունները զպելլու, երբ Կարթագէնի աւերելուց Վտով՝ նրանք նւաճեցին Ասիան, Մակէդոնեան և Յունաստանը: Կորինթոսը, Ամբրակիան և նոյն իսկ Աթէնքը պաշարելով ու զրաւելով Սուլլայի ձեռքով մնասւեցին: Բայց կրօնական զղացմունքն ու պետական իմաստութիւնը աւելի մարդասէր (humain) վարմունքներ ներշնչեցին. շատ շանցած՝ հելլենական քաղաքների գեղարւեստական և դրական շուքը չաղթողի աչքերը շլացնելով, սա էլ իւր կողմից չաղթեց և բաւականացաւ իւր հալւենիքը տանել գեղեցիկ իրերի ճաշակի և մտաւոր զբաղմունքների հետ մի բոլորովին առանձին համակրութիւն ղէպի Յուները, որոնք այդ բաներում գերազանցում էին: Պաւղանիոս նկատում է, որ Աթէնքի աւարառութիւնը և մի քանի հնութիւնների աւերումը, որոնց համար Սուլլան լանցաւոր եղաւ, մի բացառութիւն էին. ամօթալի հիւանդութիւնը, որից նա մեռաւ, համարւեց այն աստուածների պատուհասը, որոնց տաճարները նա պղծեց, Հանրապետութեան վերջին ժամանակները հռովմէական երկուսասարգութիւնը ղէպի Աթէնք էր ճանապարհորդում թէ ուսանելու և թէ միևնուցն ժամանակ աւելի լաւ դասնա-

լու Բայց Աթէնքի ամենամեծ բարերարն էր Ազրիանոս կալսը, որ անտեղ աղբիւլիս էր եղել, տակաւին իբրև մասնաւոր անձ: Նա ընդունեց անւանաղիր Արիստոտի տիտղոսը և մեծաքանակ դումարներ նւիրեց Ոլիմպէնի աւարտման համար: Մի ամբողջ քաղաքաբաժին, որ Ազրիանոսպոլիս անունն ստացաւ, բարձացաւ տաճարի հիւսիս-արեւելեան կողմում Ազրէլեան ընթացարանի և Գեամէլա քաղաքաբաժնի մէջ: Նա շինեց նաև մի տաճար նւիրած Հերակլին և համահելլենեան Արամազդին, մի Պանթէոն և մի գիմնադիոն՝ զարդարած Լիբիեան մարմարոնեալ հարկւր սիւներով, մի հնութիւն որի տեղն ալսօր անորոշ է մնացած: Մինչև Բրիլէստալից խմելու ջուր բերող ջրմուղներն սկսելով ալ կալսրի ձեռքով՝ վերջացան Անտոնիոս Նրջանկի օրով:

Ե. Աթէնքը Պաւղանիոսի ճանապարհորդութիւնն ից մինչև նորագոյն ժամանակները: Երբ Պէլոպոնէսեան պատերազմից լետոյ Աթէնքն՝ իւր քաղաքական և ուղղմագիտական անկումից լետոյ՝ միւլթարուտ էր իւր անցեալի լիշատակով, իւր հնութիւններն ու վշատակարանները, իւր առասպելաբանութիւններն ու պատմութիւնը գրի առնւեցին մատենագրների մի առանձին դասի շնորհով, որոնց անւանեցին Ատթիզօգրաֆներ: Այն մեծաքանակ երկերից, որոնք ներշնչւած էին նորնպէս հարուստ նիւթերով, միայն հատածներն են մնում: Աշխարհագէտ Ստրաբոնը՝ օգոստոսի ժամանակներում խօսում է մի երկրի մասին որ նա նկարագրում է, աւելի իբրև փրիլիստիալ՝ քան հնախոյզ: Նաև Աթէնքի մասին նա մեզ շատ աննշան բան է ուսուցել: Ինչ վերաբերում է Պլուտարքոսին, որի «կեանքերը» (Vies)<sup>1)</sup> աթէնական թէատրոնի համար աւելի նիւթեր են պարունակում՝ քան մի այլ քաղաքի մասին, նա հնութիւնները նկարագրում է միայն հակիրճ ու պատահական եղանակով: Քաղաքի մասին ամենաճիշտ և մանրամասն տեղեկութիւններ տաող հեղինակը Պաւղանիոս Պէրիէգէսն է: Նրա այցելութիւնն Աթէնքին տեղի ունեցաւ 160 Քր. շ., երբ նա իւր տեղագրութիւնն սկսեց և ալս նկարագրութիւնների վերայ է որ կարող է Աթէնքի ամեն տեղագրական ուսումնասիրութիւն հիմնել: Նա թանկագին է ինքնըստ ինքեան և ալս ժամանակի պատճառով, երբ կազմեց, թանկագին նաև նրա համար, որ լետոյ լուսթիւնը համարեա լիապէս տիրում է ու թէ՛ Աթէնքի և թէ՛ ամբողջ հին աշխարի համար Գ. դարուց սկսելով մտնեում են նիւթական աւերման, բարոյական նախատինքի, գեղարւեստական ու գրական անկման ժամանակները: Պաւղանիոսն Աթէնքը տեսաւ նրա ամբողջ կատարելութեան շքեղութեան մէջ, հսկայական գործերի հետեւալ օրը, որոնցով Ազրիանոսը արտապատեց դէպի քաղաքն ունեցած իւր գորովը՝ ալս վաղվենին, երբ Հերովդէս Ատտիկոսը կառուցանում էր իւր թէա-

<sup>1)</sup> Յունաստանի և Հռոմի երևելի անձնաւորութիւնների համեմատական կեանքը:

րոնքը վերջապէս նրանք (Վոտտանդինուպոլսի կայսրները) հին նեթանուսական սրբառանները քրիստոնէական եկեղեցիներ դարձրին, նրանց միջից արտաքսելով ան ստուածութիւնները, հրոնք իղէալացրած էին նախնի մեծ արեւստագէտները միջոցով: Սուրբ Գէորգը Քէղէոսի տեղը բռնեց, Եղիան՝ Հելլոսի, սուրբ Սոփիան, Կարնքն՝ Աստուածալին խնաստութիւնը կամ Անարատ կուր՝ Աթէնասինը, սուրբ Միքայէլը՝ Հերակլէսինը: Որովհետև նոր պաշտամունքը շինութեան չարմարութիւններէ պահանջում, բիւզանդական անճաշակ արևստը գերադասեց գեղեցիկ դարերի ոճերից: Նա խանգարեց շինութիւնների ներսի գծերի կատարելութիւնը և գաղափարի միութիւնը: Ապազէս վարեցին նաև քանդակագործութեան գլուխ գործոց հետ, մի գործողութիւն, որ ժամանակով կալիգուլային նրա խնկն ռնալնամատութիւնն էր փափաք ազդել: Վերցնում էին նրանցից գլուխը և ան նեթանուսական առանձնալատութիւնները՝ նրանց տեղը սրբերի կերպարանքներ և քրիստոնէական խորհրդանշաններ դնելու համար: Սա բարբարոսութեան սկզբնաւորութիւնն էր, առաջին միջնագէպն ան պալքարի, որ քրիստոնէական ոգին պէտք է մղէր նեթանուսութեան դէմ:

393 թ. Ալարիխը վէստգոթերի հետ նախագահեց բացալպտ արշաւանքներին և աւերումներին: Առասպելը պատմում է սակալն, որ նա համեմատաբար չափաւոր վարմունք ունեցաւ և այս վերադրում է անկրօնական տպաւորութեան, որ նրա վերաջ գործեց Ակրոպոլիսի հսկայական Պոլիսա Պրոմիստսը: Գէնդէրիխը կէս դար լեռոյ բաւականացաւ միայն Ատտիկեան ծովգրեներն աւարի առնելով: Աթէնքը խոյս տուց աղէտից չնորժով իւր տակաւին անսասան պարիսպներին: Յուստինիանոսի մի հրովարտակը գոցել տուց Աթէնքի վարժարանները (529 թ.), որոնց վրայ նապում էին իրրև նեթանուսութեան ամենավերջին պատարների վրայ, այս պատճառով դիչերը հետզհետէ թանձրանում է քաղաքի ճակատագրի վրայ: Համարեաւ ևօթը դար շարունակ նա անհետացած է երևում պատմութիւնից: Ամբողջ գրականական կեանքը պանդխտեց դէպի Վոտտանդինուպոլիս և Թէսալոնիկէ: 1203 թ.ականից լեռոյ, երբ լսաչակիրները տիրացան այս քաղաքներից առաջինին, Աթէնքը դառաւ մի դքսութեան մալրաքաղաք, որի սահմանների մէջ գտնուում էր Ատտիկէ, Բէօտիա, Ֆոկիալի և Նւբէալի մի մասը: Բուրգունդացի ազնւատոհմի մէկը՝ Օթոն զը լա Բոշ՝ կուչեց Աթէնքի և Թէբալի դուքս: Այս շրջանից մինչև անկախութեան պատերազմները (1830) Աթէնքի ճակատագիրն եղաւ՝ ալլ ևս ոչերբէք Յոններին չը պատկանել: Տասներեքերորդ դարուց սկսեալ Ակրոպոլիսի պանծալի աւերակները շատ աղէտալի օրեր տեսան, մանաւանդ թնդանօթի դիւտի շնորհիւ և որ դարմանալին է մի իտալական ժողովրդի կողմից հասցրած վնասներն ամենից շատ եղան:

Սակեալ ՁՁ. դարու վերջերից արևմուտքի ուսումնականների միտքը սաստիկ զբաղած էր Աթէնքի հնութիւններով և ան մասերով, որ կա-

րելի էր քաղել հնութեան պատմութեան համար, Մարտին կրաւոզ կամ կրաւոզիւս, ուսուցչապետ Տիւրենդէնի <sup>1)</sup> համալսարանի ալ խնդրի համար թղթակցութիւն բացեց Արեւելքի գիտնականներէ, նէսպուլացի Թէոդորոս Յեզոմալի և Ակարնանցի Սիմէօն կաւիղիլալի հետ, որոնք նրան մի քանի անդեկութիւններ ուղարկեցին, 1621 թ. Գէզալս, Ֆրանսալի դեսպանը Պոլսում, ալցեւեց քաղաքն ու նկարագրեց նրա հազադիւտ բաները, Շուազէլ, Գուֆֆիներ կոմսը, Պոլսի դեսպանը, նորից բերեց Պարթէնոնի Ֆրիդներից (փողոց) մի բեկոր ամրան մի հատիկը և արդէն վաղուց պրծածն, Լորդ Էլզէն խրախուսելով այս օրինակից Անգլիա տարաւ Ակրոպոլիսից բռնի սրկելով քանդակների ամբողջ նաւաբնուեր, որոնք լետով գնեց կառավարութիւնը Բրիտանեան թանգարանի համար, Այս եղաւ սրբապղծութիւնների երկար շարքի վերջաւորութիւնը. սկսեալ ալն ժամանակից, երբ Յունաստանն իւր տէրը դարձաւ, հոգածութիւնով պաշտպանում է Աթէնքի փառաւոր անցեալի մնացորդները, գիտնակաները, որոնց պեղում և հետազոտում են այդ հնութիւնները տեղն ու տեղը, այս գործերը նւիրում են հազադիւտ ձեռնհասութեան հետ, սէր, խորին լարգանք ալն քաղաքին, որ նրանց աչքում ամփոփում է լուսնական քաղաքակրթութեան ամբողջ փառքն ու շուքը:

Անա՛ այս խօսքերով կնքում է վերուլշեալ հեղինակն Աթէնքի տեղագրականի վերաբերեալ լողածը, որի մի երրորդ մասը մենք հազիւ կարողացանք այտեղ քաղածօրէն մէջ բերել՝ բոլորովին զանց աւանելով այս լողածի զուտ պատմական մասը նոյն ծաւալով: Մենք ալն կարծիքն էինք, որ այս նախապարաստական տեղեկութիւնները կարեւոր էին Աթէնք մտնելուց առաջ թէ՛ նրանցով երբեմն զբաղածներին և թէ՛ նամանաւանդ անտեղեկներին, որովհետեւ ամեն մի ուղևոր որ կամենում է ըմբռնել այս չքնաղ քաղաքի անցեալ ու ներկալ երևութները, շատ անշնչան բան շահած պիտի լինէր, եթէ լանպարաստից ոտք դնէր նրա դռնից ներս: Մենք արդ պիտի տեսնենք, թէ ինչպէս ժամանակակից Աթէնքի իւրաքանչիւր երևութ, եղել է նա կրօնական, բարոյական, մտաւոր գեղարւեստական՝ իւր անցեալի հարադատ դուստրն է ներկալանում, թէ՛ և նա երկար ու ձիգ դարերում այս կամ ալն ներքին կամ արտաքին կերպարանափոխութեան ենթարկւած լինելով՝ մեզ միշտ իւր խոկական արտալպտութիւնով չը ներկալանալ:

(Իր շարունակելի)

<sup>1)</sup> Գերմանիալուս: